

ՀՏԴ 159.96Հոգեբանություն*Սուսաննա ՀԱՅԴԱՊԵՏՅԱՆ**ԱրՊՀ ՖԴ և ՆԶՊ ամբիոնի դասախոս, մ.գ.թ.**Արայիկ ՖԻՐՅԱՆ**ԱրՊՀ ՖԴ և ՆԶՊ ամբիոնի դասախոս, հ.գ.թ.*

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՈՏՈՒՄ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵԶՐՈՒՅԹԻ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում են անձի պաշտպանության կառուցակարգերի հոգեբանական առանձնահատկությունները: Խնդիրն ուղղված է պաշտպանական կառուցակարգերի հայտնաբերմանը հատկապես բնական սահմանամերձ գոտում: Քննության են դրվել նաև այս խնդրի ուսումնասիրությանը վերաբերող մի շարք գիտական մոտեցումներ:

Բանալի բառեր՝ հոգեբանական պաշտպանություն, սահմանամերձ գոտի, ադապտացիա, ինքնիրացում, տրավմատիկ ապրումներ

С. Айрапетян А. Фирян

ТЕОРЕТИКО-МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ТРАКТОВКИ ТЕРМИНА ПСИХОЛОГИЧЕСКАЯ ЗАЩИТЫ ЛИЧНОСТИ В ПРИГРАНИЧНОЙ ЗОНЕ

В статье представлены психологические особенности защитных механизмов личности. Проблема нацелена на выявление защитных механизмов, особенно выраженных в приграничной зоне проживания. Представлены на обсуждение также ряд научных подходов изучения данной проблематики.

Ключевые слова: психологическая защита, приграничная зона, адаптация, самореализация, травмирующие переживания.

S. Hayrapetyan A. Firyan

THEORETICAL AND METHODOLOGICAL INTERPRETATIONS OF THE TERM PSYCHOLOGICAL PROTECTION OF A PERSON IN THE BORDER ZONE

The article presents the psychological point of view of personal protection mechanisms. This problem is targeted at the revealing of protection mechanisms, especially in the border zone. There are also scientific approaches to this issue.

Key words: *psychological protection, border zone, adaptation, self-realization, traumatic feelings.*

Հասարակության ժամանակակից զարգացման միտումները նախանշում են հասարակության համակարգային բարդացման գործընթացը, անհատի նկատմամբ միջավայրի ճնշման բարձրացումը, սոցիալական հարաբերությունների սթրեսածին մթնոլորտի ավելացումը: Այդ երևույթներն ավելի տեսանելի են դառնում սահմանամերձ գոտում, որտեղ անձից պահանջվում է հարմարման այնպիսի մեխանիզմների ձևավորում ու տիրապետում, որոնք հատկապես գործարկելի են դառնում արագ փոփոխվող հասարակական հարաբերությունների և կոնֆլիկտային իրավիճակների ստեղծման պայմաններում, երբ ակտիվանում են անձի վրա միջավայրային ճնշման եղանակները, և ինտենսիվ զարգացում են ապրում անձի հարմարման գործոնները: Անձի հարմարման դրսևորումներից է նաև հոգեբանական պաշտպանության երևույթը:

Տեսամեթոդաբանական հետազոտությունների արդյունքներում առաջ քաշված եզրակացությունները դառնում են առավել արդիական սահմանամերձ գոտու ազգաբնակչության համար՝ հոգեբանական պաշտպանության համակարգային հիմնահարցերը բարձրացնելու և քննության առնելու, ինչպես նաև ինքնառեալիզացիայի և ազգային ինքնագիտակցության հիմնադրույթները ձևակերպելու տեսանկյունից: Նման ենթատեքստում անհրաժեշտ է լինում նաև դիտարկելու անձի հոգեվիճակների զգացմունքային դաշտը, որը բավական լուրջ ազդեցություն ունի սահմանամերձ գոտում՝ հատկապես կոնֆլիկտային հատկանիշներով բնութագրվող վայրերում, որտեղ առօրյա միջանձնային հարաբերությունները զուգորդվում են ինքնության դրսևորման այնպիսի բաղադրիչներով, որոնք պաշտպանական բնույթ են կրում տազնապային և կոնֆլիկտային միջավայրում: Հակամարտության, վախի և ապագայի նկատմամբ անորոշության պայմաններում է հենց ցայտուն կերպով դրսևորվում հոգեբանական պաշտպանության երևույթը, որի մեխանիզմները ուղղակիորեն ուղղված են հակամարտության հետ կապված հուզական լարվածության նվազեցմանը՝ կանխելով անձի վարքագծում և ընկալումներում ապակառուցողական սթրեսածին դրսևորումների ի հայտ գալը: Այս տեսանկյունից անձի, իսկ ավելի լայն իմաստով՝ ազգաբնակչության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների քննությունը կարևորագույն գիտական խնդիր է, որը վերաբերում է անձի հոգեբանական առողջության ամբողջ համակարգին:

Ժամանակակից հոգեբանական գիտակարգում պաշտպանական մեխանիզմների հայեցակարգը այս կամ այն առումով ներկայացված է տարբեր հոգեբանական դպրոցներ և ուղղություններ ներկայացնող հետազոտողների կողմից:

<<Հոգեբանական պաշտպանություն>> եզրույթն առաջին անգամ կիրառել է Ջ. Ֆրեյդը 1894 թ. <<Պաշտպանական ներդասիխոզներ>> աշխատությունում: Հետագայում հեղինակը այդ եզրույթով մատնանշում է կոնֆլիկտային իրավիճակում Ես-ի կողմից օգտագործվող բոլոր միջոցները [1]: Նույն հեղինակի կողմից այդ եզրույթն սկսեց պարբերաբար փոխարինվել <<արտամղում>>-ով՝ որպես գիտակցությունից դեպի անգիտակցականը սթրեսածին տեղեկատվության տեղափոխում և պաշտպանություն անընդունելի իրողության գիտակցության մեջ թափանցելուց:

Հոգեբանական պաշտպանության մասին տեսական մշակումների զարգացումները կապված են Ա. Ֆրեյդի անվան հետ: Կախված սպառնալիքի աղբյուրից՝ Ա. Ֆրեյդը տարբերում է բնագոյից և աֆեկտից առաջացող պաշտպանության տեսակները: Առաջին դեպքում պաշտպանության գործընթացը նպատակ ունի կանխելու բնագոյային գաղափարները, և որոնք վտանգ են ներկայացնում Ես-ի առողջության համար: Աֆեկտից առաջացող պաշտպանության գործարկումը պայմանավորված է վտանգավոր ցանկությունների և աֆեկտների գիտակցության մեջ ներթափանցման հնարավորությամբ: Բացի դրանից, Ա. Ֆրեյդը նշանակել է պերմանենտ պաշտպանական երևույթը, որը բնութագրում է «անցյալում շատ ուժեղ պաշտպանական գործընթացների մնացորդները, որոնք դուրս են եկել իրենց նախնական իրավիճակների ենթատեքստից և վերածվել մշտական բնույթ ունեցող բնավորության հատկությունների»: Ա. Ֆրեյդը ձևակերպեց պաշտպանական մեխանիզմների առաջին սահմանումը. «Պաշտպանական մեխանիզմներն են «Ես»-ի գործունեությունը, որը սկսվում է այն ժամանակ, երբ «Ես»-ը ենթարկվում է իմպուլսների չափազանց մեծ ակտիվությանը կամ նրա համար վտանգավոր ազդեցություններին: Դրանք սկսում են գործել ավտոմատ կերպով»[2]:

Հոգեբանության տարբեր ուղղությունների ներկայացուցիչները, անշուշտ, զարգացրին հոգեբանական պաշտպանության տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Է.Ֆրոմմը ներկայացրեց այն մեխանիզմները, որոնք անձը իրագործում է միջավայրի հետ կոնստրուկտիվ փոխգործողության բացակայության պայմաններում: Արդյունքում հեղինակը առանձնացրել է պաշտպանական մեխանիզմների հետևյալ խմբերը՝ *սադիզմ*՝ որպես այլոց նկատմամբ իշխանության սահմանման, *մազոխիզմ*՝ որպես անձի

1 Долгова В. И., Кондратьева О. А., Психологическая защита. Москва, 2014, էջ 63.

2 Долгова В. И., Кондратьева О. А., Психологическая защита. Москва, 2014, էջ 139.

անկախության վերացման և հասարակության հետ Ես-ի ձուլման միտումի, *դեստրուկտիվիզմ*¹ որպես խաղաղ փոխգործողությունից հրաժարման, *կոնֆորմիզմ*² որպես անձի կողմից տարածված կարծիքների յուրացման դրսևորումներ [1]:

Թ.Շիրուտանին պաշտպանական մեխանիզմները ներկայացնում էր ընկալման և խորհրդանշման գործընթացների հետ միասին: Համաձայն հեղինակի կարծիքի՝ փոխհատուցման հարմարվողականության անգիտակից ձևերի օգտագործումը արձագանք է նշանակալից պահանջումքների արգելափակման կամ խափանման փաստին և բացասական հուզական ռեակցիաներից պաշտպանվածության արտահայտություն է, թուլացնում սպառնացող վտանգավոր իրավիճակների ազդեցությունը և կանխարգելում վարքագծի ապակառուցողական միտումների ամրապնդումը [2]:

Հոգեբանության հումանիստական ուղղության ներկայացուցիչ Ա. Մասլոուն ևս անդրադարձել է հոգեբանական պաշտպանության հասկացությանին մեկնությանը: Նա գտնում էր, որ հոգեբանական պաշտպանության ձևերն ու մեխանիզմները խանգարում են անձի ինքնաներկայացման ու ինքնառեակիզացիայի գործընթացներին, քանի որ անձը կարող է բացահայտել իր ընդունակությունները միայն պաշտպանական մեխանիզմների գիտակցման և բացահայտման պայմանով [3]:

Անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների տեսական մշակումներից կարևոր է նշել Ա. Նալչաջյանի կարծիքը, ով առանձնահատուկ ուշադրություն է դարձրել էթնիկ ինքնապաշտպանվածության մեխանիզմների ուսումնասիրությանը: Նա հոգեբանական պաշտպանական մեխանիզմների շարքում նշում է մշակույթը, ընտանիքը, կրոնն ու եկեղեցին: Էթնոպաշտպանության եղանակներից մատնանշվում է նաև էթնոսի ինքնաիզոլյացիան /ինքնամեկուսացումը/, ինչի արդյունքում նկատելի է դառնում *իմբրինդինգի* երևույթը՝ միտված էթնոսի ներսում ընտանիքների ձևավորմանը և, արդյունքում, մարդաբանական որոշակի տեսակի ստեղծմանն ու պահպանմանը: Էթնոհոգեբանական պաշտպանության այսպիսի պատկերը Ա. Նալչաջյանը անվանում է *գլոբալ պաշտպանվածության տիպ*, ինչի ենթատեքստում նա առանձնացնում է կառուցվածքային հոգեբանական պաշտպանության եզրույթը: Այն արտահայտվում է ասիմիլյացիայի վտանգի առջև կանգնած էթնոկիրների համապատասխան վարքագծի մեջ, ինչը դրսևորվում է ազգային փոքրամասնության կողմից սոցիալական, ինքնակառավարման կառուցվածքների ստեղծման գործընթացում՝ ուղղված ներխուժային փոխհարաբերությունների ակտիվացմանն ու պահպանմանը [4]:

1 *Фромм Э., Бегство от свободы, М., 2011, 288 с.*

2 *Шибутани Т., Социальная психология. М., 2002. - 544с.*

3 *Հակոբյան Ն. Ռ., Մարզինալություն և հոգեբանական հարմարում, Երևան, 2009 թ.*

4 *Налчаджян А., Этнопсихологическая самозащита и агрессия, Ереван, 2000.*

Աղապտացիայի հասկացության և տեսամեթոդաբանական ներկայացման առանձնահատկություններից անհրաժեշտ է նշել հարակից տարբեր գիտությունների կողմից շրջանառվող հասկացության շրջանակների և մեթոդաբանական մոտեցումների բազմազանությունը: Աղապտացիայի զարգացման ֆիզիոլոգիական հիմնավորումը ներակայցրել է Ի. Պավլովը, ով առանձնացրել է աղապտացիայի այնպիսի արտահայտություններ, որոնք ներկայացված են <<ծանր զգացումների>> միջոցով, այնպիսի զգացումների, որոնք առաջանում են կրիտիկական պայմաններում և պահանջում են նոր պայմաններին մարդու հարմարվողականության մեխանիզմների ձևավորում ու ամրապնդում [1]:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրությունն անվերապահորեն առնչվում է հասարակությունում անձի ինքնաառաջացիայի և սոցիալականացման գործընթացներին, որոնք խթանում կամ, ընդհակառակը, խաթարում են անձի ակտիվությունը՝ վերածվելով ինքնադրսևորման յուրահատուկ միջոցի: Ներկայացնենք հոգեբանական ուսումնասիրությունների տեսամեթոդաբանական դիրքորոշումների հակիրճ վերլուծությունը, որոնք առնչվում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների վերը նշված հարցադրումներին: Բազմաթիվ հեղինակների կողմից (Չ. Ֆրեյդ, Ա. Ադլեր, Ա. Ֆրեյդ, Կ. Հորնի, Է. Էրիկսոն, Է. Ֆրոմմ, Կ. Ռոջերս և ուրիշներ) բարձրացվում է այն հարցը, որ հոգեբանական պաշտպանությունը՝ որպես կյանքի դժվար պայմաններում անձի գոյատևման և հարմարման միջոց, բացի արտահայտված աղապտիվ նշանակությունից, կարող է ձեռք բերել նաև բացասական նշանակություն՝ սահմանափակելով անձի զարգացման և ինքնաառաջացիայի հնարավորությունները: Այս դիտարկումն արդեն շատ կարևոր է՝ բնորոշելու անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառման հնարավոր շրջանակները և ներկայացնելու այդ մեխանիզմների արտահայտվածության առանձնահատկությունները սահմանամերձ գոտում բնակվող ազգաբնակչության շրջանակներում [2 3]: Կարծում ենք, քննարկվող եզրույթի ոչ միանշանակ մեկնաբանությունը կապված է այն պայմանների ու իրավիճակների հետ, որոնց պարագայում առաջանում է հոգեբանական պաշտպանության անհրաժեշտությունը: Այսպես, Ֆ. Բասսինը ներկայացնում է իր կոնցեպտուալ տեսակետը, համաձայն որի՝ հոգեբանական պաշտպանությունը դիտարկում է որպես հոգեկան տրավմային արձագանքելու

¹ *Бассин Ф. В., О силе «Я» и психологической защите // Самосознание и защитные механизмы личности: хрестоматия. Самара: БАХРАХ-М, 2000. С. 3–13.*

² *Тулупьева Т.В., Психологическая защита и особенности личности в юношеском возрасте. Автореф. дисс. канд. психол. наук. — СПб., 2001. - 25с*

³ *ՄԱՅՏՐԻՆԵՆԵՆԻ Ի.Ա., ԷՆԻՖԱՆՏԵՆԵՆԵՆԻ ԻՐԺԱՐՈՅՈՒՄԻ ԴՐՈՑՆԵՐԻ ԶԵՄԵՐՈՒՄԸ. ԾԱՅԵՐԻ ԱՐԴՈՐՈՒՄ: <http://www.shkp.ru/lib/archive/methodologies/>*

անձի ընդունակություն: Մի շարք հեղինակների կողմից ընդգծվում է հոգեբանական պաշտպանության՝ որպես անձի ադապտիվ փոխազդեցության համակարգի ուղղվածությունը՝ ըստ վտանգավոր և դեզադապտիվ արտաքին ազդակների նշանակալիության նվազեցման և թուլացման սկզբունքների: Ընդ որում, տարանջատվում են Ես-կոնցեպտի կոգնիտիվ, էմոցիոնալ և վարքային բաղադրիչների վրա ազդող բացասական արտաքին ազդակները, որոնց համադրումից էլ ձևավորվում են համապատասխան հոգեբանական պաշտպանական մեխանիզմները : Բ. Կարվասարսկին հոգեբանական պաշտպանական մեխանիզմները հանգեցնում է անձի ադապտիվ փոխազդեցություններին՝ նշելով, որ դրանք միտված են անձի բացասական փոխազդեցությունների բոլոր բաղադրիչների՝ կոգնիտիվ, էմոցիոնալ և վարքային, դեզադապտիվ ազդեցության նվազմանն ու թուլացմանը [1]:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կայուն արտահայտվածությունը ընկալումներում և վարքագծում, հաճախակի օգտագործումը, մտածելակերպի կարծրատիպացման հետ կապվածությունը աստիճանաբար կորցնում են իրենց դրական նշանակությունը և խոչընդոտում անձի զարգացումը: Արդյունքում անձը դառնում է անընդունակ գտնելու խնդրի լուծման արդյունավետ ուղիները և կորցնում է իրականության օբյեկտիվ ընկալման հմտությունները: Այդուհանդերձ, հեղինակների կողմից նշվում է նաև այն փաստը, որ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրությունը հնարավոր է իրականացնել՝ քննելով անձի պահանջմունքների առաջացման և բավարարման գործընթացները: Այս իմաստով հոգեբանական պաշտպանությունը ներկայանում է որպես անձի նպատակների արտացոլում, և, հետևաբար, նպատակների և դրանց հասնելու միջոցների, ինչպես նաև անձի դրդապատճառների և վարքագծի անհամապատասխանությունը կարող են հանգեցնել նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների անարդյունավետության: Դիտարկելով անձի հոգեբանական պաշտպանությունը սոցիալական միաջավայրի հետ փոխգործողության համատեքստում՝ ակներև են դառնում այդ երևույթի ներկայացման հետևյալ հարցադրումները՝

- արտաքին ո՞ր ազդակից պիտի անձը պաշտպանվի,
- արդյո՞ք հոգեբանական պաշտպանության կարիքն առաջանում է միայն արտաքին միջավայրի վտանգավոր կամ անհասկանալի լինելու պարագայում, թե՞ կարող է նաև դիտվել որպես անձի Ես-կոնցեպտի յուրահատուկ դրսևորում,
- արդյո՞ք հոգեբանական պաշտպանության բոլոր դրսևորումները դրական ազդեցություն են ունենում անձի զարգացման և ինքնառեալիզացիայի վրա,

¹ Карвасарский Б.Д., Психотерапия. СПб., 2007. - 672с.

արդյո՞ք կոնֆլիկտային սահմանամերձ գոտում բնակվող ազգաբնակչության մոտ ձևավորվում են հոգեբանական պաշտպանության առանձնահատուկ մեխանիզմներ, թե՞ սահմանամերձ շրջանների բնակիչները յուրացնում են պաշտպանության ունիվերսալ մեխանիզմները, որոնք բավարար են հոգեբանական անվտանգության ձեռքբերմանը:

Այսպիսով, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառման արդյունքում հնարավոր է իրականության ընկալման փոփոխումը կամ վերախմաստավորումն այնպես, որ առավելագույնս նվազեն այդ իրականությունից բխող վախերն ու տագնապները, իրավիճակը կորցնի իր ծայրահեղ վտանգավոր պատկերը և ընկալվի անձի համար նպաստավոր երանգներով: Այստեղ մենք համամիտ ենք այն հեղինակների կարծիքներին, ովքեր մատնանշում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների գործառնության երկակիությանը: Մի կողմից՝ ակներև է, որ պաշտպանական մեխանիզմները դրական գործառույթ են կատարում՝ նպաստելով առկա իրավիճակին անձի հարմարմանը, և հնարավորինս զերծ են պահում տրավմատիկ հոգեկան ապրումներից: Մյուս կողմից՝ պաշտպանական մեխանիզմների երկարաժամկետ գործարկումը կարող է փոխարինել արտաքին միջավայրի օբյեկտիվ ընկալմանը, ինչի արդյունքում անձը ընտելանում է իր <<անվտանգ>> հոգեվիճակին և չի կարողանում ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը:

Հարկ է նշել նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների դասակարգման, տարբերակման և գործառնությունների վերաբերյալ կուտակված տեսական տարակարծիք մոտեցումների առկայությունը: Այսպես, Լ. Վասիլյուկի կարծիքով, հոգեբանական պաշտպանության բոլոր մեխանիզմների հիմքում ընկած է արտամղման մեխանիզմը, որն ուղղված է վախի զգացումի թուլացմանը կամ քողարկմանը [1]:

Հոգեվերլուծաբանների կողմից խնդրո առարկա հանդիսացող եզրույթը ներկայացվում է որպես չբավարարված անձի պահանջմունքների և Ես-ի ձևավորման ընթացքում չլուծված խնդիրների արտացոլում: Գ. Քելլերմանի համոզմամբ, այդ տեսակետը անհրաժեշտ է համալրել սոցիոկենսաբանական տեսությունների հետ, որոնք արտահայտում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կապը որոշակի զգացմունքների կառավարման հետ: Այդ տեսակետն իր զարգացումը ստացավ Ռ. Պլուտչիկի հետ համահեղինակությամբ ստեղծված կոնցեպտի հիմքում, որը ներկայացնում է անձի զգացմունքների և պաշտպանական մեխանիզմների ուրույն համակարգ: Հոգեբանական պաշտպանության մոդելը Ռ. Պլուտչիկը ներկայացրել է 1979 թ. համահեղինակներ Գ. Քելլերմանի և Հ. Կոնտի հետ միասին: Այս մոդելը

¹ *Васильюк Ф. Е., Психология переживания: анализ преодоления критических ситуаций. М.: Изд-во Моск. ун-та, 1984. 200с.*

հիմնված է զգացմունքների ընդհանուր էվոլյուցիոն տեսության վրա, որում ներառվում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմները՝ որպես ութ հիմնական հույզերի նախատիպեր: Տեսամեթոդաբանական այդ դրույթները իրենց արտացոլումն են գտել Life Style Index հարցաթերթիկում: Հեղինակները, վերլուծելով տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունները, հանգում են այն եզրակացության, որ պաշտպանական մեխանիզմներն առաջին հերթին փոխկապակցվում են անձնային առանձնահատկությունների հետ: Համաձայն այդ տեսակետի՝ առաջարկվում են հոգեբանական պաշտպանության հետևյալ տեսական մոդելները.

1. հոգեբանական պաշտպանության հատուկ ձևերն առաջանում են առանձնահատուկ հույզերի հաղթահարման պահանջմունքից,

2. հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, որոնք ութն են, ձևավորվում են, համապատասխանաբար, ութ հիմնական հույզերի (*վախ, զայրույթ, ուրախություն, տխրություն, ընդունում, մերժում, սպասում, զարմանք*) հաղթահարման նպատակով,

3. հոգեբանական պաշտպանության ութ հիմնական մեխանիզմները (*արտամղում, տեղափոխում, ռեակտիվ կազմավորում, կոմպենսացիա, իրականության ժխտում, պրոյեկցիա, ռացիոնալիզացիա, ռեզրեսիա*) տիրապետում են ինչպես նմանության, այնպես էլ հակադրության հատկանիշներով,

4. անձի հոգեախտորոշման որոշ տեսակները իրենց հիմքում կրում են հոգեբանական պաշտպանության ոճերի ազդեցությունը,

5. անձի հոգեբանական պաշտպանության ոճերը կարող են ձևավորվել պաշտպանական մեխանիզմների ցանկացած համադրումով:

Սահմանամերձ գոտում հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Զ. Պարֆենովայի մշակումները: Հեղինակն առանձնացնում է հոգեբանական պաշտպանության *գիտակցական, ենթագիտակցական և սոցիալական* տեսակները: Հակիրճ ներկայացնենք դրանցից յուրաքանչյուրը: *Ենթագիտակցական պաշտպանության* ձևն անձի փորձի և անհատական զարգացման արդյունք է: *Գիտակցական պաշտպանությունն* առաջանում է անմիջական շրջապատի նորմերի և դիրքորոշումների յուրացման արդյունքում: Երրորդ՝ *պաշտպանության սոցիալական տեսակը* ներկայացվում է որպես բարդ, երկակի հասկացվող երևույթ: Հեղինակն այն նմանեցնում է ինչպես ենթագիտակցական տեսակին, այնպես էլ՝ գիտակցականին, քանի որ այն հասարակության ավանդույթների և նորմերի յուրացման արդյունքն է [1]: Հենց այդ տեսակին է ամենից շատ առնչվում սահմանամերձ գոտում հոգեբանական

¹ Долгова В. И., Кондратьева О. А., Психологическая защита. Москва, 2014, с. 63.

պաշտպանական մեխանիզմների եզրույթը, որն անկասկած սահմանակից է ինչպես սեփական մշակութային արժեքների ու նորմերի համակարգին, այնպես էլ՝ հարևան մշակույթներին: Ավելին, նշված տարածաշրջանում հոգեբանական պաշտպանական մեխանիզմների առաջացումը, իր բնույթով լինելով սոցիալական, բնութագրվում է երկու սահմանային մշակույթների փոխազդեցություններով: Այլ խոսքերով, հնարավոր է դառնում տարանջատել հոգեբանական պաշտպանության ներքին՝ անձնային, և արտաքին՝ սոցիալական մակարդակները:

Այսպիսով, հոգեբանական պաշտպանական մեխանիզմների եզրույթը ներկայացնում է անձի կայունացման և ինքնադրսևորման որոշակի համակարգ, որն ուղղված է պաշտպանելու անցանկալի, տրավմատիկ ապրումներից, ներքին և արտաքին կոնֆլիկտային իրավիճակներից, և որն ապահովում է անձի հոգեբանական անվտանգությունը նման իրավիճակներում:

Այնուամենայնիվ, «հոգեբանական պաշտպանություն» եզրույթն այսօր բավականին ընդլայնված է հասկացվում՝ ի տարբերություն ավանդաբար ձևավորված հոգեվերլուծական կողմնորոշման գաղափարների: Միննույն ժամանակ, տեսակետների և կարծիքների համալիր քննությունը հանգում է այն մտքին, որ այսօր հոգեբանական ուղղությունների հայեցակարգերում արտահայտված մեկնությունները հիմնվում են տեսական և մեթոդաբանական տարբեր սկզբունքների վրա, ինչի արդյունքում նկատվում է ներկայացվող խնդրի շուրջ հետազոտողների ընդգծված տարակարծությունը: Մոտեցումների անորոշությունը հաճախ արտահայտվում է նաև նույն տեսական համակարգի ներսում և արտահայտվում կա՛մ տերմինաբանական տարբեր մեկնությունների, կա՛մ էլ ուսումնասիրման մեթոդների խիստ բազմազանության մեջ: Ակներև է, որ խնդրո առարկա հանդիսացող երևույթի բազմիմաստության հիմնական պատճառը <<հոգեբանական պաշտպանության>> հասկացության ինքնուրույն է, դրա կառուցվածքային կապվածությունը անձի պաշտպանական վարքագծի հետ, ինչն էլ նպաստում է բազմանշանակ և բազմաբնույթ կարծիքների միաժամանակյա շրջանառմանը:

Միննույն ժամանակ, հստակեցված չեն այդ բարդ ֆենոմենի զարգացման օրինաչափություններն ու մեխանիզմները, ձևավորված չէ հոգեբանական պաշտպանության ուսումնասիրության համալիր գործիքակազմը, ինչի արդյունքում մշակված չէ պաշտպանական մեխանիզմների դասակարգումն ըստ տեսամեթոդաբանական հիմնադրությունների, իսկ գոյություն ունեցող տեսական մեկնությունները կիրառելի են հիմնականում որոշակի սոցիալ-հոգեբանական վիճակներում:

Նկատելի է նաև հոգեբանական պաշտպանության մեթոդաբանական ուսումնասիրության պակասը, պաշտպանական մեխանիզմների ախտորոշմանն ուղղված մեթոդների անբավարար զարգացումը և անձի պաշտպանության կառուցվածքի օպտիմալացման և բարելավման համար

կիրառվող համալիր ընթացակարգերի գրեթե լիակատար բացակայությունը: Դրան հակառակ՝ ներկայում նկատվում է սոցիալական տարբեր բնագավառներում անձի լարվածության և տազնապայնության մակարդակի բարձրացման ընդհանուր միտվածություն, ինչն իր հերթին խթանում է հետաքրքրությունը հոգեբանական պաշտպանության ձևերի ամրապնդման նկատմամբ: Այսպես, արդիական են դառնում մասնագիտական վարքի ձևավորման, արտակարգ իրավիճակներին, ինչպես նաև՝ հոգեբանական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլ իրողություններին անձի դիմադրողական և արդյունավետ գործունեության կազմակերպման մեխանիզմներն ու մեթոդները:

Վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքում ստացված տեսական եզրակացությունները և մատնանշված էմպիրիկ նյութը գերազանցապես ներկայացվում են ընդհանրացված, քիչ են հանդիպում կոնֆլիկտային փոխհարաբերությունների արդյունքում ձևավորված հոգեբանական պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ գրանցումներն ու տեսա-մեթոդաբանական մեկնությունները: Պատճառներն ակնհայտ են. կոնֆլիկտային, այն է՝ նախապատերազմական, պատերազմական և հետպատերազմական փուլերում գտնվող սոցիալական փոխհարաբերությունները ներկայանում են հետազոտողին հուզական բարձր լարվածության, փոխվստահության կորստի և անտրոպոգեն արտակարգ իրավիճակների պայմաններում, ինչը բավական դժվարացնում է հոգեբանական հետազոտության ընթացքը: Այդ խնդիրներն առավել ակնհայտ են երևում սահմանամերձ գոտում բնակվող անձանց մոտ, որոնք գտնվում են անմիջական վտանգի և վախի մթնոլորտում:

Ժամանակակից կոնֆլիկտաբանության և հոգեբանության մեջ առանձնացվում են պարբերական բնույթ կրող սահմանամերձ կոնֆլիկտային իրավիճակներն արտահայտող գործողությունների առաջնային և երկրորդային նպատակներ: Առաջնային նպատակը մարդկային կորուստներ պատճառելն է, իսկ երկրորդայինն այդ կորուստների հետևանքներն են: Օրինակ՝ ցավի և կորուստի զգացումը, զայրույթը, վախի մթնոլորտը, սեփական ուժերի թերազնահատումը: Նման իրավիճակները սահմանամերձ գոտում բնակվող անձանց մեջ հաճախ հանգեցնում են որոշակի հուզական դաշտի ձևավորմանը, որը բնութագրվում է հոռետեսությամբ, ներկայի և ապագայի նկատմամբ անվստահությամբ, սպառնալիքների սպասման հոգեվիճակով, հուզական գրգռվածությամբ և այլն: Ինչպես իրավացիորեն նշում է Չ. Դ. Սպիլբերգերը, սպառնալիք ներկայացնող իրավիճակները անձի կողմից ընկալվում են որպես սթրեսային, որոնց նկատմամբ ձևավորվում է համապատասխան պաշտպանական մեխանիզմների համալիր՝ միտված այդ սուբյեկտիվ ընկալվող սպառնալիքի կամ վտանգի չեզոքացմանը:

Ներկայումս նշված հարցադրումների կարևորության գիտակցումը առավել նկատելի է պրակտիկ-գործառնական ուսումնասիրություններում: Հաճախ <<հոգեբանական պաշտպանություն>> եզրույթն աղավաղվում է, ներկայացվում զուտ հոգեբանական թրեյնինգների ենթատեքստում կամ մեկնաբանվում որպես հոգեբանական օգնության ցուցաբերման հնարավոր արդյունք: Նման միակողմանի կարծիքների տարածման հայտնի հարթակ է դարձել համացանցը, որը հազեցած է «հոգեբանական պաշտպանության մեթոդների» առաջարկներով, խարդախությունների դեմ հոգեբանական պաշտպանության, տեղեկատվության ծանրաբեռնվածության կամ քաղաքական մանիպուլյացիաներից խուսափելու վերաբերյալ խորհուրդներով: Նման հարցադրումները դառնում են պահանջված հատկապես այն շրջաններում, որտեղ ազգաբնակչությունը գտնվում է սոցիալ-քաղաքական լարված իրավիճակում, ապրում է կյանքին սպառնացող պայմաններում և ստիպված կրում է այդ սպառնալիքներից բխող հետևանքները: Այս իրողությունն արտահայտում է թե՛ հարցերի գիտական մեկնաբանման, թե՛ սեղմ ժամկետում դրանց լուծման սոցիալական անհրաժեշտությունը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը: